# ԲՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարության էլեկտրոնային պարբերաթերթ **4/2017**




## Վերջապես բնապահպանության ոլորտը ծանրակշիռ ներդրումներ կունենա

### • Բնապահպանության ոլորտում հավաքագրվել են 420 մլն ամերիկյան դոլլարի ներդրումային առաջարկներ

Փետրվարի 10-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմանը ներկայացրել է բնապահպանության ոլորտում նախատեսված ներդրումային ծրագրերը: Նկատելով, որ ներդրումային ծրագրերի խրախուսմանը և խթանմանն ուղղված ՀՀ կառավարության ակտիվ գործողությունները վերաբերում են բոլոր ոլորտներին, ներառյալ շրջակա միջավայրի պահպանությանը՝ Արծվիկ Մինասյանը հայտնել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության որդեգրած քաղաքականությունը նպատակաուղղված է շրջակա միջավայրի պահպանության նպատակով ֆինանսական ռեսուրսների համախմբմանը և նպատակային ծրագրերի իրականացմանը: Այդ խնդրի լուծման համար կիրառվելու է 3 գործիք: Ըստ նախարարի՝ ներկայում քննարկման փուլում է բնապահպանական և բնօգտագործման վճարները ամբողջությամբ շրջակա միջավայրին ուղղելու ծրագրային առաջարկները. «Ինչպես գիտեք պետական բյուջեում յուրաքանչյուր տարի ձևավորվում է շուրջ 70 մլն ամերիկյան դոլարին համապատասխան դրամական վճարներ, որոնցից, ցավոք, շատ քիչ մասն ուղղվում շրջակա միջավայրի բարելավման կոնկրետ ծրագրերի իրականացմանը: Մեր առաջին խնդիրն այս բյուջետային միջոցները տեղափոխել շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի, այդ թվում՝ համայնքներում և կոնկրետ տարածքներում ներդրումային ծրագրերի իրականացմանը: Այս քայլի նպատակն է ապահովել շրջակա միջավայրի բարելավումը թե՛ ներկա, թե՛ ապագա սերունդների համար, բավարար հիմքեր ստեղծել զարգացման տեսակետից»: Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում կան պայմանավորվածություններ միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաև «Կանաչ կլիմա» հիմնադրամի հետ, որ եթե այս մեխանիզմն աշխատի, ապա իրենք պատրաստ են այդ գումարների մինչև 50 տոկոսի չափով դրամաշնորհներ տրամադրել:

Բնապահպանական խնդիրների լուծման համար կարևորվել է նաև Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող և միջազգային փորձում հաջող կիրառում ունեցող «Բնապահպանական ծրագիր պարտքի դիմաց» գործիքը:

*Շարունակությունը՝ էջ 2 /*

## • Վերջապես Բնապահպանության ոլորտը ծանրակշիռ ներդրումներ կունենա

Սկիզբը՝ էջ 1 /




Բնապահպանության նախարարը բերել է Ճապոնիայի և Գերմանիայի օրինակը, որոնք հանդես են գալիս առաջարկությամբ, ըստ որի՝ երկրների միջև ձևավորված պարտքի որոշակի մասը կզիջվի, եթե դրա դիմաց իրականացվեն բնապահպանական ծրագրեր:

Երրորդ կարևոր գործիքը մասնավոր ներդրումներն են, որոնք կարող են արդյունավետորեն ներգրավվել բնապահպանության ոլորտում՝ ոչ միայն կորպորատիվ սոցիալական պատասխանատվության, պատասխանատու հանքարդյունաբերության, այլև առաջին հերթին կոնկրետ ներդրումային ծրագրեր իրականացնելու միջոցով:

Բնապահպանության նախարարը հայտնեց, որ վերջին-յալ երեք գործիքներով հավաքագրել են առաջարկներ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 420 մլն ամերիկյան դոլ-լար, որից այս պահին կոնկրետ ծրագրերի տեսքով իրակա-նացվում են շուրջ 185 մլն. դոլարի ներդրումային, դրամաշ-նորհային ծրագրեր, իսկ 2017 թ.-ին շարունակվող, կամ սկսվող ծրագրերի ծավալը կազմում են շուրջ 11,5 մլն դոլար:

## Սահմանվել են Հայաստանի ջրային տարածքներում արդյունագործական որսի չափաքանակները



ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը սույն թվականի փետրվարի 7-ին հրաման է ստորագրել 2017 թ. ընթացքում ՀՀ ջրային տարածքներում արդյունագործական որսի չափաքանակները սահմանելու մասին.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության ջրային տարածքներում 2017 թվականի ընթացքում սահմանել կարաս, ծածան և խեցգետին կենդանատեսակների արդյունագործական որսի հետևյալ չափաքանակները.

1) Կարաս՝ մինչև 100 տոննա,

2) Ծածան՝ մինչև 100 տոննա,

3) Խեցգետին՝ մինչև 3000 տոննա, որից Սևանա լճում՝ 1100 տոննա:

2.Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության պետին՝ կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի կնքման գործընթացը կազմակերպելիս հիմք ընդունել սույն հրամանի 1-ին կետում նշված չափաքանակները:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետին՝

1) սահմանված կարգով վերահսկողություն իրականացնել Հայաստանի Հանրապետության ջրային տարածքներում արդյունագործական ձկնորսության նկատմամբ,

2) ուժեղացնել վերահսկողությունն իշխան, կողակ և սիգ ձկնատեսակների ապօրինի որսի և վաճառքի կանխարգելման ուղղությամբ՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների հետ:

**ՆԱԽԱՐԱՐ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

## Խորհրդարանը վավերացրեց Փարիզի համաձայնագիրը



Փետրվարի 9-ի նիստում Ազգային ժողովը վավերացրեց նախագահի ներկայացրած Փարիզյան համաձայնագիրը, որն ընդունվել է 2015-ի դեկտեմբերի 12-ին: Համաձայնագիրը վավերացվել է միաձայն՝ 93 կողմ ձայներով: Հիշեցնենք, որ Փարիզյան համաձայնագիրը ՄԱԿ-ի կլիմայի վերաբերյալ շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված եւ 2020 թվականից մթնոլորտում ածխաթթու գազի մակարդակի նվազեցման միջոցառումները կարգավորող համաձայնագիր է: Այն պատրաստվել է Փարիզում կլիմային նվիրված համաժողովի ընթացքում՝ Կիոտոյի արձանագրության փոխարեն, կոնսենսուսով ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 12-ին, իսկ ստորագրվել է 2016-ի ապրիլի 22-ին:

# ՏՏ տեխնոլոգիաները բախում են մեր բնապահպանության դռները

Փետրվարի 7-ին բնապահպանության նախարարությունում նախարար Արծվիկ Մինասյանի նախագահությամբ կայացել է հերթական աշխատանքային քննարկումը բնապահպանության համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական լուծումների ներդրման վերաբերյալ: Քննարկմանը մասնակցել են նախարարության համապատասխան ստորաբաժանումների, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ներկայացուցիչներ, մեդիափորձագետներ: «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերության կողմից ներկայացվել են ծրագրեր, որոնց կիրառմամբ բնապահպանական բազմաթիվ հարցեր կարելի է լուծել: Անդրադարձ է եղել, մասնավորապես,կենսապլաստիկների արտադրությանը, որոնք կարող են կիրառում գտնել կենցաղում, սննդի, կոսմետիկայի, դեղագործության և շատ այլ ոլորտներում՝ պոլիէթիլենային տոպրակների փոխարեն: Կենսապլաստիկ տոպրակները ստացվում են բնական և վերականգնվող նյութից, որպես հումք առաջարկվում է կարտոֆիլի կեղևը, արտադրությունը գրեթե առանց թափոնների է և բնության համար անվտանգ: Ներկայացվել են նաև անօդաչու սարքերի միջոցով անտառների վերականգնման և բույսերի միջոցով աղտոտված հողերի մաքրման (ֆիտոռեմեդացիա) ծրագրերը: «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերության հիմնադիր-տնօրեն Վահան Շաքարյանը նշել է, որ ներկայացված ծրագրերը գաղափարներ են, որոնք համապատասխան հաշվարկային գործընթաց պետք է անցնեն: «Ներկայացված գաղափարներն արդեն առաջադեմ մոտեցումներ են, որոնք կարող են լուրջ առաջընթաց արձանագրել բնապահպանական ոլորտում», -իր հերթին նշել է բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Հանդիպմանը մասնակցող «AIRES» ընկերության փորձագետները անդրադարձել են քաղաքացիական հասարակության և նախարարության միջև կապուղիների, հեռահար մոնիթորինգի, տեղեկատվության տեսանկարահանման և դրա ներկայացման կարողությունների ընդլայնման հնարավորություններին: Կարևորելով ներկայացված ծրագրերը, մասնակիցները պայմանավորվել են շարունակել նմանատիպ հանդիպումները: Նախարարի առաջարկով նախատեսվում է առաջիկայում ստեղծել նաև ՀՀ բնապահպանության նախարարին կից ՏՏ ընկերությունների խորհուրդ, ուր առավել լայն մասշտաբով կքննարկվեն տեղեկատվական տեխնոլոգիաների և բնապահպանության ոլորտում նորարարական լուծումների ներդրման հարցերը, ինչն էլ հնարավորություն կտա բիզնես-առաջարկները Դոնորների խորհրդին ներկայացնելու՝ աջակցություն ստանալու և գաղափարները կյանքի կոչելու համար:



# Արդյունավետ համագործակցություն Ճապոնիայի գործընկերների հետ

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության և ՀՀ պետական կառավարման լիազոր մարմինների հետ համատեղ իրականացվող «Սողանքային աղետի կառավարում» ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Ծրագրի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության աշխատակիցները մասնակցել են ԵՊՀ-ում անցկացվող աշխատանքային սեմինարների թեմատիկայի քննարկման և նախապատրաստական աշխատանքներին: Նախատեսված հինգ սեմինարների ընթացքում քննարկման են ներկայացվելու ծրագրի շրջանակներում մշակված օդալուսանկարների վերծանման միջոցով սողանքների հայտնաբերման և սողանքային տեղամասերի գույքագրման մեթոդական ցուցումները, սողանքների հետազոտության, հակասողանքային միջոցառումների պլանավորման, սողանքային աղետի անհապաղ արձագանքման, հակասողանքային կառույցների նախագծման ուղեցույցները:

Աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում համաձայնագիր է ստորագրվել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ներկայացուցիչների և ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպանի մասնակցությամբ: Ամփոփվել են նաև Սողանքային աղետի կառավարումե ծրագրի միասնական վերջնական հաշվետվության արդյունքները:



# Հայաստանի շրջակա միջավայրը հայտնվել է ծանր վիճակում



• «Հետքի» հարցերին պատասխանում է Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը

**-Ինչպե՞ս եք գնահատում մեր երկրի բնապահպանական անվտանգությունը:**

-Անկեղծ պետք է ասեմ, որ իմ գնահատականը բարձր չէ: Ավելին, կան իսկայական ռիսկեր, որոնք առանձին դեպքերում առարկայական դրսևորում են ստացել, որի հետևանքով այսօր շրջակա միջավայրը հայտնվել է ծանր վիճակում: Սրա հիմնական պատճառն այն է, որ տնտեսական և բնապահպանական նախաձեռնությունների հավասարակշռումը միշտ ստորադասվել է առաջին գործողությանը՝ տնտեսական նախաձեռնությանը: Իմ խորին համոզմամբ, բնական կապիտալը, որ մեր շրջակա միջավայրն է իր բոլոր տարրերով՝ հող, ջուր, ընդերք, մթնոլորտ, բուսական, կենդանական աշխարհն ու դրանց դրսևորումները մենք որպես պետություն չենք արժևորել: Իսկ ցանկացած գործունեություն, որպեսզի կարողանանք գնահատել, պետք է իմանանք, թե ինչ արժեքի դիմաց է դա իրականացվում: Եթե մենք բնական կապիտալը արժևորած լինեինք, վստահ եմ,որ հանքարդյունաբերական շատ նախաձեռնություններ կամ չէին իրականացվի, կամ կիրականացվեին այնպիսի պահանջներով, որոնք թույլ չէին տա նման վիճակի առաջացում: Իսկ վիճակի արտացոլանքը նաև մարդկանց առողջության վրա է: Այս տեսակետից մենք ունենք անվտանգության շատ լուրջ խնդիր: Մենք խոսում ենք արդեն սերունդների անվտանգության մասին:

**-Ալավերդին այդ արտացոլանքներից է, 700-ից ավելի քաղցկեղով հիվանդ է գրանցված բժշկական կենտրոնում: Մի մասը նաև հարևան գյուղերից է: Պատճառը այդպես էլ չի բացահայտվում:**

-Ես ուզում եմ այդ առնչությամբ արձագանքել, որ մեր համակարգի բացասական կողմերից մեկն էլ այն է, որ պատճառահետևանքային կապը լիարժեք չի ներկայացվում, և սա խնդիր է: Այդ հարցադրումը մենք դրել ենք. «Լավ, այդտեղ ունենք հանքարդյունաբերական ձեռնարկություն, որն արտանետումներ է իրականացնում: Որքա՞ն պատճառական կապ կա այդ տարածքում ապրող բնակչության հիվանդությունների և ձեր արտանետումների միջև»: Այդ ձեռնակությունների տերերը մեզ հետ շանտաժի լեզվով էլ խոսում են, ասում են՝ մի հատ նախ ապացուցեք՝ արդյոք մեր գործունեության հետևանքով է դա, ապա մեր նկատմամբ պահանջներ սահմանեք: Սա պարտադրում է մեզ հիմնարար քայլեր իրականացնել: Դրա համար եմ ասում, որ բնապահպանական անվտանգության և առհասարակ շրջակա միջավայրի պահպանության շատ լուրջ վերանայումների կարիք ունենք:

**-2016 թ. սեպտեմբերի 23-ին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը խնդրել էր կառավարությանը ևս 5 տարով երկարաձգել Ալավերդու պղնձաձուլական գործարանի անթույլատրելի արտանետումները: Ի՞նչ լուծում է ստացել ընկերության պահանջը:**

-Կառավարությունից գրությունը եկել է բնապահպանության նախարարություն: Մենք մի քանի քննարկում ենք իրականացրել և եկել ենք այն համոզման, որ այս պահին դրա իրավասությունը չունենք: Ավելին, դա չունի նաև կառավարությունը, որովհետև ընկերությանը տրված է եղել պղնձաձուլական գործարանի տեխնոլոգիաները արդիականացնելու և արտանետումները նվազեցնելու հնարավորություն: Եթե ընկերությանը դա չի հաջողվել, ապա հարցի լուծումը այլևս գործադիր մարմնի իրավասությունից դուրս է: Այդ հարցը կարող է լուծվել միայն օրենսդիր մարմնում, մասնավորապես՝ այն դեպքում, եթե հստակ օրենքում նախատեսված երաշխիքներ լինեն, որ ներդրվելու են ժամանակակից տեխնոլոգիաներ: Ի վերջո, որպես բնապահպանության նախարար ինձ չեն հետաքրքրում նրանց բնապահպանական և բնօգտագործման վճարները: Ավելի լավ է էդ վճարները չտան, բայց կիրառեն ժամանակակից նորմալ տեխնոլոգիաներ: Եթե ի վիճակի չեն փոխել տեխնոլոգիաները, առաջարկվել է ներկայացնել շատ ավելի հիմնարար՝ պղնձաձուլարանի կառուցման ծրագիր: Երբ կներկայացվի համարժեք ներդրումային ծրագիր, որը թույլ կտա հարցը հիմնարար ձևով լուծել, այն ժամանակ օրենսդիր մարմինը այս հարցը կարող է քննարկել:

**-Կարո՞ղ ենք ընդունել, որ կառավարությունը մերժել է ընկերության առաջարկը:**

-Սահմանված նորմերի չափաքանակների ժամկետները ավարտվելուց հետո ցանկացած արտանետում ընկերությանը բերելու է մեծածավալ ֆինանսական տույժեր: Ես հասկանում եմ հասարակության այն մասին, որին չեն հետաքրքրում արտանետումները, որին ամեն գնով հետաքրքրում է իր աշխատանքը: Բայց մեր մոտեցումը շատ պարզ է՝ եթե դուք անգամ այսօր գերադասում եք Ձեր աշխատատեղը, բայց չունեք վաղվա նկատմամբ պատկերացումներ, թե ինչպես պետք է Ձեր սերունդներն ապրեն, այդպիսի որոշումը ենթակա է վերանայման: Մեր սկզբունքային դիրքորոշումն այն է, որ ընկերությունը հիմնովին լուծի հարցը:

*Շարունակությունը՝ էջ 5 /*

## • Հայաստանի շրջակա միջավայրը հայտնվել է ծանր վիճակում

*Սկիզբը՝ էջ 4 /*

**-Տեղեկատվություն ունենք, որ «Թեղուտ» ՓԲԸ-ի պոչամբարի ջրի փակ շրջանառու համակարգը չի գործում, և պոչանքները հատկապես գիշերները թափվում են Շնող գետը, այնտեղից էլ՝ Դեբեդ: Դա նկատում են նաև Շնողի այգեգործները՝ իրենց այգիները ջրելիս: Ի՞նչ կասեք այս մասին:**

- Անկեղծ ասած՝ այդ տեղեկատվությունը մենք չունենք: Հակառակը, Լոռու մարզի մեր բնապահպանական տեսչությունը, որ պարբերաբար այցեր է իրականացնում, արձանագրում է, որ գործում է համակարգը: Սակայն, տեսչությունը ինքը քաղաքացիական ծառայության համակարգում գործող կառույց է: Նրանց աշխատանքային օրը սկսվում է առավոտյան ժամը 9-ին և ավարտվում է ժամը 18:00-ին: Շաբաթ, կիրակի օրերին էլ չի աշխատում: Որպեսզի հսկողությունը լինի ավելի արդյունավետ՝ տեսչությունը պետք է լինի հատուկ ծառայության կարգավիճակի կառույց՝ գիշեր-ցերեկ կարողանա իրականացնել պատշաճ հսկողություն: Այնուամենայնիվ, Ձեր կողմից մատնանշվող դեպքը մենք կփորձենք արտաժամյա աշխատանքի ներգրավմամբ բացահայտել: Ցավոք, մեր հնարավորությունները թույլ չեն տալիս, որ մենք ունենանք այնպիսի մշտական դիտակետեր, որ նաև ժամանակակից տեխնոլոգիաներով կարողանանք անընդհատ ինֆորմացիա ստանալ: Այս հարցը մենք ներառել ենք մեր բարեփոխումների ծրագրում:

**-Համայնքների ղեկավարները դժգոհում են, որ բնապահպանական սուբվենցիաները բաշխելիս ազդակիր համայնքներում շատ դեպքերում մոնիտորինգ չի իրականացվում: Ինչո՞ւ:**

-Իրականում սա կարևոր ոլորտներից մեկն է: Ցավոք, այսօրվա գործող օրենսդրությունը լիարժեք չի լուծում խնդիրը: Մենք ունենք օրենք, որի սահմանած բանաձևն այնպիսին է, որ ամեն տարի չի ենթադրում տվյալ համայնքում շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված սուբվենցիաներ: Սուբվենցիաների բաշխման համակարգն այսօր վերանայման կարիք ունի: Մյուս կողմից՝ մենք նկատում ենք, որ չունենք այն մասնագիտական մակարդակը, որպեսզի համայնքների պատասխանատուները ներկայացնեն իսկապես շրջակա միջավայրի բարելավման ծրագրեր: Ներկայացվող ծրագրերի մի էական հատվածը քաղաքաշինական ուղղվածության կամ ասֆալտապատման ծրագրեր են, որը շեղում է հիմնական նպատակից: Մենք ուզում ենք այլ համակարգ կիրառել: Նախ՝ ազդակիր համայնքներում անընդհատ տեղեկատվության և ուսուցման աշխատանքներ ենք իրականացնելու, որպեսզի համայնքների պատասխանատուները ի վիճակի լինեն ներկայացնել շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված ծրագրեր:

Երկրորդ կարևոր քայլն այն է, որ առաջիկա բյուջետային գործընթացում, ամբողջ երկրի մասշտաբով, մենք առաջարկելու ենք, որ շրջակա միջավայրից վերցված գումարները՝ դրանք կարող են լինել ռոյալթիների և բնօգտագործման վճարների տեսքով, ամբողջությամբ վերաձևակերպվեն որպես շրջակա միջավայրի բարելավման ծրագրեր՝ կանաչ էկոնոմիկայի լույսի ներքո: Սա նշանակում է, որ մենք հետայսու կունենանք ոչ թե առավելագույնը 8 մլրդ դրամի բյուջե, այլ շրջակա միջավայրից վերցվող ամբողջ 31-35 մլրդ դրամի ծավալը՝ ուղղված շրջակա միջավայրի բարելավման ծրագրեր իրականացնելուն:

Երրորդ կարևոր քայլը, որ մենք փորձում ենք իրականացնել, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Պարտքի դիմաց բնապահպանական ծրագրեր» բանաձևն է: Այս փոփոխության նախնական տարբերակը մենք արդեն քննարկել ենք միջազգային կառույցների հետ: Կհաջողվի՞ մեզ դա անել առաջիկայում, կնշանակի, որ 2018 թ. կունենանք ազդակիր համայնքների բյուջետային սուբվենցիաների բաշխման ուրիշ մեխանիզմ: Չի՞ հաջողվի, այսօրվա համակարգը պետք է շարունակի գործել, բայց այդ համակարգն արդեն սպառել է իրեն:

**-Տարիներ շարունակ չի լուծվում Ախթալայից Միխայել Արամյանցի տուն գնացող ճանապարհի եզրին կուտակված շուրջ 69 հազար խմ պոչանքների տեղափոխման խնդիրը: Կարո՞ղ եք ներազդել Ախթալայի ԼՀԿ-ի սեփականատիրոջ վրա՝ դրանք տեղափոխելու գործում:**

-Այո, մենք կարող ենք պատրաստել զեկուցագիր՝ ուղղված վարչապետին, որպեսզի իրականացնենք լրացուցիչ միջոցառումներ: Եթե պոչանքի դրսևորումներ են, ապա դրանք պատասխանատվության ենթակա գործողություններ են, և մենք կձեռնարկենք միջոցներ:

**-«Վանաձոր Քիմպրոմ»-ը լուծարման շեմին է: Քիմպրոմի աշխատողները պարբերաբար ահազանգում են այնտեղ առկա խիստ վտանգավոր քիմիական նյութերի սպառնալիքների մասին: Տեղյա՞կ եք այդ մասին:**

-Քիմիական նյութերի վտանգների կանխման համար մեր կողմից արդեն աշխատանքներ են իրականացվել: Մենք կարողացանք ունենալ համակարգ, որի միջոցով խիստ վտանգավոր քիմիական նյութերը կվերացնենք: Քիչ վտանգավոր նյութերը, որոնք թեև խիստ բացասական ազդեցություն չունեն, բայց ժամանակի ընթացքում կարող են վերածվել ավելի վտանգավոր նյութերի, դրանց առնչությամբ նույնպես գործողություններ են ձեռնարկվել: Ձեռնարկության լուծարման դեպքում առհասարակ շրջակա միջավայրում ստեղծվող վիճակի վերաբերյալ փաստեր են ներկայացվում: Ուզում եմ ասել, որ մենք այս մասին արդեն ունենք տեղեկատվություն և առաջիկայում, երբ կամփոփենք, կներկայացնենք նաև լրատվամիջոցներին:

## Մթնոլորտային օդի աղտոտվածության ճշգրիտ գնահատումը գերակա ուղղություն



Համաձայն «Հանրապետության շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացում» պետական ծրագրի՝ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է մակերևութային ջրերի և մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի մոնիթորինգ և գնահատում: Մակերևութային ջրերի մոնիթորինգն իրականացվում է նմուշառման 131 դիտակետում, որն ընդգրկում է հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի մոտ 40 գետ, 6 ջրամբար և Սևանա լիճը: Ջրի նմուշառումներն իրականացվում են նախապես մշակված ժամանակացույցի համաձայն ամսական հաճախականությամբ:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներ կատարվում են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի, Ծաղկաձոր քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում: Ընդհանուր առմամբ այս բնակավայրերում գործում է պասիվ նմուշառման 224 դիտակետ և 17 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում), կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ, իսկ մնացած քաղաքներում շաբաթական դիտարկումներ:

## Տրամադրվել է վայրի կենդանիների եւ բույսերի 123 թույլտվություն

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությունը հունվարի 30-ից մինչև փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում տրամադրել է «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով (CITES) կարգավորման 123 թույլտվություն (հավաստագիր):

Տրամադրվել է նաև ՀՀ տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) 2 կտրոն և պայմանագիր, ինչպես նաև՝ վայրի կենդանիներ և առանձին վայրի բույսեր, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման դեպքում՝ 1 լիցենզիա:

## Ե՛վ հսկել, ե՛ւ աջակցել




Նախարարության «Դիլիջան» ազգային պարկում շարունակվում են ուժեղացված ռեժիմով ստուգայցերը ապօրինի ծառահատումների և որսագողության դեպքերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով:

Ազգային պարկի աշխատակիցների կողմից՝ շուրջօրյա շրջայցերի ընթացքում հայտնաբերվել է 2 անտառխախտման դեպք (ապօրինի 1 ծառահատում և 2,5 խ.մ ապօրինի կերպով դուրս բերված փայտանյութ), կազմվել են անտառխախտման արձանագրություններ և ուղարկվել նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Բնակչությանը տրամադրվել է նաև քամատապալ, հողմատապալ փայտանյութից առաջացած 65,7 խ.մ. վառելափայտ: Մի լավ ձեռնարկով էլ հանդես են եկել Գիտության բաժնի աշխատակիցները. նրանք կազմակերպել են «Դիլիջան» ազգային պարկի ձմեռող թռչունները» բնապահպանական թեմայով միջոցառում, որին մասնակցել են Հաղարծին գյուղի ավագ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները: Յուրաքանչյուր այսպիսի միջոցառում նպաստում է աշակերտների բնապահպանական գիտելիքների խորը ընկալմանը, քանի որ դրանք անցկացվում են բնության գրկում և աշակերտները տեսական գիտելիքները մեկտեղում են գործնականի հետ:

# Էկոտուրիզմը Հայաստանում

**• Ձեզ ենք ներկայացնում «Հetq» կայքում տպագրված Տիգրան Բաղդասարյանի ուշագրավ հոդվածը՝ Հայաստանում էկոտուրիզմի զարգացման հեռանկարների մասին**

Մինչև 2020 թ.-ի կեսերը էկոտուրիզմը կարող է կազմել համաշխարհային զբոսաշրջության շուկայի 25%-ը: Իսկ դրանից ակնկալվող եկամուտը կհասնի 470 միլիարդ դոլարի: Այս հաշվարկները ներկայացրել է էկոտուրիզմի միջազգային ընկերակցությունը: Մասնագետները համոզված են, որ Հայաստանն էկոտուրիզմը զարգացնելու մեծ ներուժ ունի: Մեր երկրում կա 4 ազգային պարկ, 3 արգելոց, 27 արգելավայր և որպես զբոսաշրջիկին հասանելի էկոտուրիզմի ռեսուրս՝ ավելի քան 40 գետ , 7 լիճ, մոտ 300 տեսակի թռչուն (որոնցից 260-ը ձվադրում են Լոռու մարզի տարածքում), 3500 տեսակի բույս, 220 տեսակի թիթեռ, կենդանիներ, որոնք ընդգրկված են Կարմիր գրքում, 100-ից ավելի քարանձավներ... Հայաստանում, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ զարգանում է նաև ներքին տուրիզմը: Այն, բնականաբար, ինչ որ չափով նպաստում է մարզերի զարգացմանը, սակայն միջոցների անհամաչափ բաշխումը, միևնույնն է, էապես խանգարում է տուրիզմի համաչափ զարգացմանը Հայաստանի բոլոր շրջաններում: Այժմ տուրիզմի զարգացման և ապակենտրոնացման համար մի քանի նոր նախագծեր են հաստատվել, որոնց արդյունավետ օգտագործման դեպքում կլուծվեն մի շարք ենթակառուցվածքային խնդիրներ: Տարածքների համաչափ զարգացման համար Հայաստանի 9 քաղաքներում մեկնարկում են ծրագրեր: Վանաձոր, Ջերմուկ, Դիլիջան, Ծաղկաձոր և Աշտարակ քաղաքներում աշխատանքները արդեն սկսվել են: Ծրագրերն իրականացվում են Ասիական զարգացման բանկի տրամադրած վարկի միջոցով: Նախատեսված է առաջին փուլում ներդնել 50 մլն դոլար (Վանաձորում՝ 20 միլիոն դոլար, Ջերմուկում՝ 10 միլիոն, Ծաղկաձորում՝ 10 միլիոն, Դիլիջանում՝ 6 միլիոն, Աշտարակում՝ 4 միլիոն): Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը 2016 դեկտեմբերի 13-ին Ջերմուկում՝ զբոսաշրջությանը զարգացմանը նվիրված խորհրդակցության ժամանակ, ասել է, որ Ռուսաստանը 3 մլն դոլար դրամաշնորհ է հատկացրել Հայաստանին՝ գյուղական տուրիզմը զարգացնելու համար, ծրագրի մեջ նախատեսվում է ընդգրկել 60 բնակավայր: IDeA հիմնադրամը և ԵՄ-ն նույնպես զբոսաշրջության զարգացման ծրագիր են սկսելու Դիլիջանում: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,195 մլն եվրո, որից 780 հազարը Եվրամիության տրամադրած դրամաշնորհն է, 195 հազարը՝ ազգային համաֆինանսավորումը, 140 հազարը՝ IDeA–ի համաֆինանսավորումը: Եվրոպական Տարածաշրջանային Ակադեմիայի զբոսաշրջության ամբիոնի դասախոս Անահիտ Ոսկանյանն ասում է. «Էկոտուրիզմի զարգացումը Հայաստանում պետական լուրջ հոգածության կարիք ունի: Օրինակ՝ կան մշակված էկոտուրեր, բայց դրանց շահարկումը լիարժեք չի իրականացվում, քանի որ շրջակա միջավայրի վրա ազդող բազմաթիվ բացասական գործոններ կան. պոչամբարները, անխնա շահագործվող բազմաթիվ հանքերը խաթարում են այն ցանկալի էկոմիջավայրը, որն անհրաժեշտ է էկոտուրերի իրականացման համար: Հարկ է նշել նաև որսագողությունը, անտառահատումները, որոնք անուշադրության են մատնվում պետական կառույցների կողմից: Թեև վերջին տարիներին Հայաստանում զարգանում է գյուղական զբոսաշրջությունը, որն իր մեջ ներառում է էկոտուրիզմի բազմաթիվ բաղադրիչներ: Եվ այն գյուղերում, որտեղ զբոսաշրջությունն ակտիվանում է, նկատվում է նաև շրջակա միջավայրի հանդեպ հոգածություն: Ազգային պարկերում, արգելոցներում էկոտուրերի գրագետ կազմակերպումը ֆինանսական հոսքերի աղբյուր կարող է հանդիսանալ և այնպիսի խնդիրներ լուծի, որոնց համար անհրաժեշտ գումար այդ տեղանքներին դեռ չեն հատկացվում»: «Հայաստանի ամենամեծ առավելություններից է լանդշաֆտի փոփոխությունը տասնյակ կիլոմետրերի վրա, - ասում է Հայկական աշխարհագրական նախագծի նախագահ և ArmGeo արշավային ակումբի ղեկավար Տիգրան Շահբազյանը: Մեր փոքր երկրում այնքան տեսնելու բան կա, որ մարդիկ չեն հասցնում ձանձրանալ, իհարկե, եթե ուղեկցորդ-զբոսավարը տեղյակ է այդ ամենին և կարող է կրեատիվ ներկայացնել Հայաստանը: Վանք ու եկեղեցիներն առաջին հայացքից են շատ տպավորիչ, բայց նույն տիպի մի քանի պատմամշակութային հուշարձան այցելելուց հետո զբոսաշրջիկները հոգնում են, իսկ մենք ունենք շատ տարբեր բաներ ցույց տալու և որ ամենակարևորն է բոլոր հետաքրքրությունները կարելի է համադրել: Ճանապարհորդությունը սկսվում է գյուղից, ծանոթանում են գյուղացու կենցաղին, ապրում են գյուղական տանը, ուտում են գյուղական ուտեստները, կարող են իրանց ձեռքով էլ պատրաստել: Գյուղից մեկնարկում է քայլարշավ դեպի սարեր-ձորեր, ճանապարհին տեսնում են պատմամշակութային և բնության հուշարձաններ, իջնում են կիրճ, լողում են սառը գետում, բարձրանում են լեռներ հիանում գագաթից բացվող տեսարանով և այսպես կարելի է շարունակել: Հայաստանը անվերջ բացահայտումների երկիր է: Այդ ամենը պետք է ճիշտ մատուցել, պետք է ունենալ հայկական բրենդ, բայց առանց պաթոսի, որին հավատում են միայն հայերը: Պետք է այնպիսի բան որ բոլորին դուր գա, իսկ մենք, ի տարբերություն շատ երկրների, այն ունենք մնում է ճիշտ ներկայացնել»:



## Պատմենք մեր մանուկներին արևի մասին եւ մոլորակը վստահենք նրանց




Աշխարհում կա՞ ավելի անուշ բան, քան մանուկների փամփլիկ թաթիկներն են, կամ՝ ավելի ջինջ բան, քան նրանց արևի պես վառ, արևի պես ջերմ աչիկներն են: Երևի դա է «պատճառը», որ արեգակը երբեմն էլ «նախանձում» է նրանց ու փորձում մեկ մեկ էլ «նեղացնել» իր ուլտրամանուշակագույն ճառագայթներով: ՀՀ բնապահպանության նախարարության Օզոնի ազգային կենտրոնն իր 2016 թ.-ի ծրագրերի շարքում կյանքի կոչեց մի նախագիծ, որի առաջնային նպատակն էր արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանվելու մասին տեղեկատվության տարածումը՝ հասցեագրված երեխաներ-ծնողներ թիրախային խմբին: Իրազեկող նյութը դյուրին դարձնելու նպատակով որոշվեց կազմել գունավորման գրքույկներ, որտեղ բացի պատկերավոր նկարներից, հակիրճ ներկայացված կլինեին արևի վնասակար ճառագայթներից պաշտպանվելու հիմնական կանոնները: Դրան զուգահեռ՝ քննարկվեց ծնողների համար նախատեսված տեղեկատվական պաստառների գաղափարը: Մտահղացումը անչափ գայթակղիչ էր և անսահման օգտակար, ուստի այն կյանքի կոչելու համար նախարարությունը դիմեց ՀՀ առողջապահության նախարարությանը և համատեղ ուժերով ծնվեց նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված «Արև, արև, եկ, եկ» սքանչելի գունավորման գրքույկը (տպաքանակ՝ 11 000 ) և տեղեկատվական պաստառը, որը կրկին մշակվեց երկու նախարարությունների և ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության հետ իրականացվող «Ինստիտուցիոնալ համակարգի ուժեղացում և կարողությունների ստեղծում» ծրագրի համատեղ ուժերով: Պաստառն իր նուրբ ու ճաշակով արված նկարներով և տպավորիչ գունային շեշտադրումներով ծնողներին հիշեցնում է արևի ճառագայթների վնասակար ազդեցության մասին, ինչպես նաև՝ սովորեցնում արևի վնասակար ազդեցությունից պաշտպանվելու կանոնները: Այնուհետև, 2016 թվականի հուլիսի 13-ին Շառլ Ազնավուրի անվան հրապարակում կայացավ գրքույկի և տեղեկատվական պաստառի շնորհանդեսը, որն էլ ավելի ընդգծեց նման ձեռնարկները շարունակական դարձնելու անհրաժեշտությունը: Երեխաների և նրանց ծնողների համար կազմակերպվեց իրազեկման ուրախ միջոցառում, որն ուղեկցվում էր ժամանցային և ուսուցողական խաղերով, կրկին անգամ եկավ հաստատելու, որ մեր մոլորակի ճակատագիրը կլինի հուսալի, եթե հայտնվի լավ էկո դաստիարակություն ստացած մանուկների ձեռքերում: Եվ այս գեղեցիկ ձեռնարկի համար պետք է երախտապարտ լինենք Բնապահպանության նախարարության Օզոնի ազգային կենտրոնին և նրա տնօրեն Լիանա Ղահրամանյանին:






| ՈՒՄ ճառագայթման ինդեքսը | ՈՒՄ ճառագայթման աստիճանը |
|---|---|
| <3 | Ցածր |
| 3-5 | Միջին |
| 6-7 | Բարձր |
| 8-10 | Շատ բարձր |
| >10 | Էքստրեմալ |

Նախագիծը՝ **Արծրուն Պեպանյանի**
Խմբագիր՝ **Մանվել Մկրտչյան**
Ձևավորումը՝ **Նարինե Բաղդասարյանի**
Նյութերը՝ **ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության կապերի վարչության**

Հեռախոս՝ **011 818 517**